



«Նոր ժամանակի կրթություն»
» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն.
կոնֆլիկտներ

Առարկան՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Եփրեմյան

Ուսումնական հաստատություն՝ Խաչիարի միջն. դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Ժամանակակից ընտանիքի ազգային և կրոնական առանձնահատկությունները.5

Ընտանեկան հոգեբանության կապը հարակից գիտությունների հետ.....6

Ընտանեկան հոգեբանության հիմնական մեթոդները.....7

Ընտանիքը որպես փոքր սոցիալական խումբ.....8

Ընտանեկան վեճեր. հոգեբանական առանձնահատկությունները.....9

Կոնֆլիկտի տեսակները

Կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում.....16

Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում.....16

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ.....17

Եզրակացություն.....18

Գրականության ցանկ.....19

Ներածություն

Կոնֆլիկտներն ուսումնասիրվել են տարբեր մասնագիտությունների շրջանակներում: Այժմ ևս ուսումնասիրվում է օրինակ՝ կառավարման, մենեջմենթի, հոգեբանության և այլ մասնագիտությունների կոնտեքստում: Կոնֆլիկտի բազում սահմանումներ կան: Կոնֆլիկտը դա հակադիր շահերի, հայացքների, ձգտումների բախում է, ընդհարում, պայքարի հասցնող տարակարծություն և սուր վեճ: Մարդկային պատմության բոլոր ժամանակներում էլ եղել են տարատեսակ կոնֆլիկտներ որոնք իրենց ազդեցությունն են ունեցել այդ պատմության ձևավորման հարցում: Կոնֆլիկտներն ուսումնասիրելով կարող ենք նկատենլ, որ վտանգավորը ոչ թե դրանց առաջացումն է եղել, այլ կառավարումը: Հենց վերջինս էլ հիմք է հանդիսացել կոնֆլիկտաբանության ձևավորման համար, որպես առանձին գիտություն: Այնդասվում է երիտասարդ գիտությունների շարքին և զբաղվում է հասուն «դատողության» և մեծ էներգիա, ջանք պահանջող երևույթների ուսումնասիրմամբ: Կոնֆլիկտաբանությունը պատասխանում է այն հարցերին, թե ինչու են առաջանում կոնֆլիկտները կամ ինչպես են զարգանում, ինչպես կարելի է կառավարել դրանք: Ընդ որում՝ այն աշխատում է ինչպես տեսական մակարդակում, այնպես էլ՝ գործնական. կոնֆլիկտաբանությունը առաջին գիտական մոտեցումն է, որը փորձում է մարդկային փոխհարաբերությունների ամենաբարդ և անլուծելի թվացող դրսևորումները փոխակերպել առողջ և ներդաշնակ փոխհարաբերությունների: Կոնֆլիկտաբանները կոնֆլիկտըը սահմանում են այսպես. **ցանկացած իրավիճակ, որում սոցիալական իրականության սուբյեկտները՝ լինեն առանձին անհատներ, խմբեր, խոշոր կազմակերպություններ, պետություններ, պետությունների միավորումներ, համարում են, որ ունեն իրար հակասող նպատակներ, ընկալում են դիմացինին՝ որպես հակառակորդ, և դիմում են ցանկացած գործողության՝ իրենց նպատակներին հասնելու համար, ընդհուպ մինչև հակառակորդին ոչնչացնելը, որակվում է՝ որպես կոնֆլիկտ:** Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինեն կոնֆլիկտներ: Ընտանեկան տարաձայնությունները հնարավորություն են ստեղծում թուլացնել լարված մթնոլորտը, հասկանալ մեր կողքին ապրող մարկանց տեսակետներն ու համոզմունքները: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա:

Հետազոտության նպատակը՝

- Գտնել ընտանեկան կոնֆլիկտների պատճառները ,գիտական տեսանկյունից ուսումնասիրել ընտանիքի զարգացման օրինաչափությունները, կառուցվածքային բաղադրիչները, տիպերը:

- կազմակերպել հոգեբանական աջակցության ծառայություն՝ խորհրդատվություն և հոգեթերապևտիկ աշխատանքներ՝ ընտանիքի անդամների, ամուսնական զույգի, ամբողջ ընտանիքի հետ, նրա զարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության խնդիրն է՝

1. ուսումնասիրել կոնֆլիկտի սոցիալ-հոգեբանական հիմքերը,
2. Գտնել կոնֆլիկտների լուծման ուղիները, կոնֆլիկտների դերը երեխայի դաստիարակության մեջ:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

1. Ժամանակակից ընտանիքի ազգային և կրոնական առանձնահատկությունները:

«Ընտանիք» բառը լատիներեն familia (անգլերում՝ family) բառից է ծագել, որը նշանակում է տոհմ, ցեղ, որսերենում՝ семья-ն ծագել է <<սերմ>> բառից:

Ժամանակակից ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթարկվում է որոշակի սոցիալական նորմերի, վարքի կանոնների, ունի իրավունքների ու պարտականությունների մի շրջանակ, որոնցով կարգավորվում են հարաբերություններն ամուսինների, ծնողների ու երեխաների միջև:

Ժամանակակից ընտանիքների հիմնական տիպը նուկլեար կամ միջուկայինն է, երբ մեկ հարկի տակ ապրում են հայրը, մայրը և երեխաները: Պատահում են նաև նուկլեար ընտանիքներ, որոնք կազմված են մեկ ծնողից և երեխաներից, քանի որ ըստ վիճակագրական տվյալների, ամեն տարի տեղի ունեցող ամուսնալուծությունների քանակը գերազանցում է ամուսնությունների թվին:

Ի տարբերություն նուկլեար տիպի, գոյություն ունի մեկ այլ տիպ, որը կոչվում է ընդլայնված: Այս ընտանիքում ապրում են հայրը, մայրը, երեխաները, ինչպես նաև տատիկ-պապիկները, հնարավոր է նաև հորեղբայր, հորաքույրները: Այս տիպի ընտանիքը ավելի շատ հանդիպում է գյուղական վայրերում, ուր ավանդույթները պահպանվում են սովորույթի ուժով:

Ընտանիքն ապահովում է իր յուրաքանչյուր անդամի հոգեկան պաշտպանվածությունը, անհրաժեշտության դեպքում ցուցաբերում է հոգեբանական աջակցություն, նաև բժշկական միջամտություն: Ընտանիքում հոգեբանական

բարենպաստ մթնոլորտ կարող է տիրել միայն անդամների փոխադարձ սիրո, համբերության, ծերերին ու թույլերին օգնելու պատրաստակամության և ծնողների հանդեպ հարգանքի պայմաններում:

Ընտանիքի հոգեբանություն դասընթացի հիմնական խնդիրներն են

1. տալ սիստեմավորված պատկերացումներ ամուսնաընտանեկան հարաբերությունների էվոյուցիայի մասին,
2. ցույց տալ բնորոշ հատկությունները և ընտանիքի կենսական ցիկլի առանձնահատկությունները,
3. բացահայտել ընտանեկան հոգեբանության գլխավոր հիմնախնդիրները:

Այդ հիմնախնդիրներն են՝

1. ընտանիքի դերը անձնավորության ձևավորման գործում,
2. ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների տեսության ընդհանուր հարցերը,
3. ընտանեկան փոխազդեցությունը,
4. ամուսնական խնդիրները,
5. երեխաների դաստիարակությունը,
6. ընտանեկան համակարգի կենսագործունեությունը,
7. ընտանեկան հարաբերությունների կազմակերպումը և դինամիկան,
8. ընտանիքի բարոյական մթնոլորտը,
9. ընտանիքի հետ հոգեշտկողական աշխատանքի հարցերը:

2. Ընտանեկան հոգեբանության կապը հարակից գիտությունների հետ:

Ընտանիքը՝ որպես փոքր սոցիալական խումբ, որպես նշանակալի հուզական հարաբերությունների համակարգ և որպես սոցիալական ինստիտուտ, ուսումնասիրվում է և սոցիալական հոգեբանության, և անձի հոգեբանության, և

սոցիալոգիայի շրջանակներում: Ծնող-երեխա հարաբերությունները, դաստիարակության ոճերը, երեխայի զարգացումը ընտանիքում տարիքային և մանկավարժական հոգեբանության ուսումնասիրման առարկա են: Ընտանեկան կոնֆլիկտները մանրամասնորեն դասակարգված են կոնֆլիկտաբանության մեջ: Ընտանիքի կենսագործունեության խանգարումները՝ որպես հոգեկան տրավմայի, ընտանեկան դերերի ախտահարման աղբյուր, գրավում է կլինիկական հոգեբանների և հոգեթերապևտների ուշադրությունը: Դրանով իսկ ընտանիքի հոգեբանությունը սերտ կապված է այլ հարակից հոգեբանական գիտությունների հետ: Ընդհանուր հետաքրքրությունների հետ մեկտեղ բացահայտվում են նաև ընտանեկան հոգեբանության տարբերակիչ առանձնահատկություններ՝ ի դեմս հոգեբանական գիտելիքների այլ ոլորտների: Եթե սոցիոլոգները և սոցիալական հոգեբանները ուսումնասիրում են խմբերը (մեծ և փոքր), ապա ընտանեկան հոգեբանությունը՝ ընտանիքում ներգրավված անհատներին: Դրա մեջ է մտնում և անդամների վրա ընտանիքի ազդեցության ուսումնասիրությունը, և անհատի ազդեցությունը ընտանիքի զարգացման և գոյության վրա: Կապերն ընտանիքում, ի տարբերություն ցանկացած խմբի, բարեկամական են: Անձի ուսումնասիրությամբ զբաղվող հոգեբանները ուշադրությունը բևեռում են անհատական ներքին մեխանիզմների և անհատների տարբերությունների վրա, ընտանեկան հոգեբանները կենտրոնանում են ընտանեկան համակարգին սերտաճած անհատի վրա:

3. Ընտանեկան հոգեբանության հիմնական մեթոդները:

Ընտանեկան հոգեբանության հիմնական մեթոդներն են՝

1.Դիտում: Դիտում ասելով հասկանում ենք ընտանեկան իրավիճակում մարդկանց վարքի ընկալումը տեղի ունեցող իրադարձությունների հետագա գրանցմամբ: Հոգեբանը չի միջամտում ընտանիքի անդամների գործողությունների մեջ: Դիտումների արդյունքների արձանագրությունը պետք է խիստ փաստագրական լինի՝ առանց հետևությունների և մեկնաբանությունների:

2.Կոնկրետ իրավիճակների վերլուծության մեթոդ: Կոնկրետ ընտանեկան իրավիճակի կամ կոնկրետ իրադարձության ուսումնասիրությունը ենթադրում է բազմակողմանի

ուսումնասիրություն՝ թեսթերի օգտագործում, կենսագրությունների ուսումնասիրություն, հարցազրույցների անցկացում:

3. Հարցում: Քանի որ յուրաքանչյուր մարդուն հարցում կատարել հնարավոր չէ, հոգեբանները աշխատում են միայն կոնկրետ ընտրակազմի հետ: Բացի ռեսպոնդենտների բժախնդիր ընտրությունից, նրանք պետք է խիստ ուշադիր լինեն հարցերի ձևակերպման մեջ: Լավ հարցերը պետք է առաջացնեն բազմաբնույթ պատասխաններ: Հարցումը կարող է կատարվել հետախոսով, անհատական զրույցի ընթացքում, անկետան կարող է ուղարկվել փոստով: Հարցման արդյունքները պահանջում են պարտաճանաչ և բժախնդիր ուսումնասիրություն:

4. Վիճակագրական մեթոդներ: Ստացված արդյունքների նշանակության մակարդակի և դրանց կապվածության հաշվարկի համար օգտագործվում է մաթեմատիկական վիճակագրությունը: Վիճակագրական մեթոդները օգտակար են շատ կախվածությունների բացահայտման համար, բայց սահմանափակ են պատճառահետևանքային կապերի բացահայտման առումով:

5. Գիտափորձ: Սա միակ մեթոդն է, որը թույլ է տալիս հավաստիորեն հաստատել, որ որևէ գործոնի առկայությունը հանգեցնում է մեկ այլ գործոնի առաջացմանը: Բացահայտվում են պատճառահետևանքային կապերը: Գիտափորձի անցկացման համար պարտադիր է փորձարարական և ստուգիչ խմբերի առկայությունը: Առանց ստուգիչ խմբի հնարավոր չէ հաստատել պատճառահետևանքային կապերի առկայությունը:

4. Ընտանիքը որպես փոքր սոցիալական խումբ:

Ընտանիք, ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն

Ընտանիք, հասարակության տարրական բջիջ, որը կազմաված է մարդկանց փոքր խմբից: Ընտանիքը ձևավորվում է կնոջ և տղամարդու ամուսնությունից, որոնք ունեն նույն կենցաղը, ձգտում են ունենալ դաստիարակված, կրթված և հասարակությանը պիտանի երեխաներ: Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից: Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է, որը կարող է աստիճանակարգային (հիերարխիկ) լինել: Այստեղ կա լիդեր (երբեմն, մեծ ընտանիքներում, մեկից ավելի), կան ենթականեր (կատարողներ), յուրաքանչյուր անդամ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր կարգավիճակը և համապատասխան դերերը: Որոշ ընտանիքներում լինում է միայն մեկ լիդեր, որը կարող է լինել ավտորիտար կամ ժողովրդավար անձնավորություն: Բայց այժմ մեծաթիվ են կոչվում այսպես կոչված էգալիտար (հավասարության վրա հիմնված) ընտանիքները, որի անդամները (առնվազն ամուսինները) հավասար կամ գրեթե հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն: Սա արդեն ժողովրդավարական կամ ազատական-ժողովրդավարական ընտանիք է: Որոշ երկրներում (ԱՄՆ, Ռուսաստան և այլն) կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկայումս մարդկանց մեծամասնությունը գերդասում է ունենալ էգալար, ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող ընտանիք: Ընտանիքի կառուցվածքային փոփոխություններ առաջ են գալիս նրա զարգացման ընթացքում, նրա կենսական ճանապարհի տարբեր հատվածներում՝ առաջադրելով նոր խնդիրներ, պահանջելով նոր մոտեցումներ և լուծումներ:

5. Ընտանեկան վեճեր. հոգեբանական առանձնահատկությունները:

Ընտանիքները լինում են լրիվ և ոչ լրիվ, բարենպաստ և անբարենպաստ և այլն: Որոշ ընտանիքներում մթնոլորտը բարեհարմար է և հանգիստ, մյուսներում ընտանեկան կյանքը դառնում է ամվերջ վեճերի և կոնֆլիկտների շարան: Ընտանիքն առանց վեճերի և կոնֆլիկտների չի կարող գոյություն ունենալ, քանի որ դրանք օգնում են ներընտանեկան խնդիրների վերհանմանը և լուծմանը: Հակառակ դեպքում հետագայում այդ խնդիրները կարող են դառնալ ընտանեկան անբարեհարմարության

գործոն: Կան ընտանիքներ, որտեղ կոնֆլիկտները սովորական երևույթ են, որոնք կոչվում են կոնֆլիկտաձին ընտանիքներ:

Վեճը ինքնագնահատականների կոնֆլիկտ է: Վեճերի մասնակիցները ձգտում են պահպանել սեփական ինքնագնահատականը և հեղինակությունը ի հաշիվ փակառակորդի՝ ինքնագնահատականի և հեղինակության իջեցման: Վեճը միշտ ներառում է անձնային վիրավորանքներ: Այս դեպքում մեղավոր են երկու կողմն էլ: Ինքնագնահատականի բարձր աստիճանի դրսևորման ձևերից մեկը զուգընկերոջ հոգեբանական շահագործումն է:

Ընտանեկան վեճը կարող է ավարտվել հետևյալ կերպ.

1. մասնակիցներից մեկը իրեն մեղավոր է ճանաչում,
2. իրեն մեղավոր էճանաչում նրա զուգընկերը:

Բայց հնարավոր է նաև երրորդ, ամենատարածված տարբերակը՝ փենք երկուսս էլ մեղավոր ենք: Կոնֆլիկտի դուրս գալու բանաձևն է. փենք վիճում ենք, նշանակում է՝ մենք մեղավոր ենք: Այստեղ չկա ոչ ավանդական էգոիզմը, երբ պատասխանատվությունը գցվում է դիմացի ուսերին, չկա նաև մաշդասիրական ինքնագոհաբերումը, երբ ամբողջ պատասխանատվությունը վերցվում է սեփական ուսերին: Մասնագետները առանձնացնում են կոնֆլիկտի առաջացման հետևյալ հիմնական պատճառները՝

1. սեռական անհամատեղելիություն,
2. նյութական խնդիրներ,
3. հոգեբանական անհամատեղելիությունը:

Կոնֆլիկտների առաջացման բազմազանության մեջ մասնագետները առանձնացնում են ընդամենը մեկ պատճառ՝ որևէ պահանջմունքի պակաս կամ լրիվ անբավարարվածություն: Հիմնական պահանջմունքները, որոնց պատճառով կարող են առաջանալ կոնֆլիկտներ, հետևյալն են.

1. ուշադրության, սիրո, քնքշանքի,

2. նյութական,
3. սեռական,
4. սպասումների և ակնկալիքների չարդարացում,
5. թմրանյութի կամ ալկոհոլի օգտագործում,
6. ազատ ժամանակի ճիշտ և արդյունավետ կազմակերպման,
7. երեխաների դաստիարակության խնդիրների:

Կոնֆլիկտի լուծման համար անհրաժեշտ է կոնֆլիկտող բոլոր կողմերի մասնակցությունը: Այստեղ կարևորվում է փոխզիջումը և կոնֆլիկտի պատճառների ու ընթացքի վերլուծությունը: Հակառակ դեպքում կոնֆլիկտը թողնում է օնստվածք, որն ունենում է վարքային համապատասխան դրսևորումներ: Կոնֆլիկտը կանխելու համար մեծ նշանակություն ունի նաև հումորի զգացումը:

Վեճի առաջացման մեխանիզմը ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է տարբերել պատկերացումների երեք համակարգ.

1. Ծրատկերացումների եսակենտրոն համակարգ: Այս համակարգի կենտրոնում են օես-ը, օիմ ցանկությունները, օիմ նպատակները: Բոլոր մնացած առարկաները և մարդիկ այդ համակարգում ներկայացված են որպես սեփական ցանկությունների բավարարման համար օգտակար կամ խոչընդոտող գործիքներ:

2. Ծրատկերացումների այլասիրական /ալտերոցենտրիկ/ համակարգ: Այստեղ բոլոր պատկերացումների կենտրոնում ուրիշն է: Անձը վերապրում է մյուսի ցանկությունները, նպատակները, ինչպես սեփականը, նույնացնում է իրեն նրա հետ: Բոլոր մնացած առարկաները, մարդիկ, այդ թվում նաև սեփական անձը, այդ համակարգում ներկայացված են որպես այդ մյուսի ցանկությունների բավարարման համար օգտակար կամ խոչընդոտող գործիքներ:

3. Ծրատկերացումների սոցիոցենտրիկ համակարգ: Սա պոլիցենտրիկ համակարգ է, որը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես սեփական, այնպես է ուրիշների

ցանկությունները, հետևաբար, գտնել դրանց բավարարման փոխադարձ ընդունելի միջոցներ:

Կոնֆլիկտի տեսակները

Հոգեբանության մեջ առանձնացվում է կոնֆլիկտների հետևյալ տեսակները.

1.Ներանձնային. բնութագրվում է նույն անձի մեջ երկու հավասար ուժերի կամ գաղափարների բախմամբ՝ հակադրվելով ուղղվածությամբ, դրդապատճառներով, հետաքրքրություններով, պահանջումներով և այլն:

2. Սիջանձնային. առաջանում է մարդկանց միջև միմյանց փոխհարաբեբվեփս, երբ նրանք հետապնդում են անհամատեղելի նպատակներ՝ ունենալով անհամատեղեփ արժեքային կողմնորոշումներ ու սկզբունքներ: Նման դեպերում սուր մրցակցությամբ ձգտում են հասնելու միևնույն հետապնդեփ նպատակին, որը բնականաբար վերապահված է միայն կողմերից մեկին:

3. Սիջխմբային. իբրև բախումային կողմեր հանդես են գափս սոցիալական խմբերը, որոնք ունեն անհամատեղեփ նպատակներ և իրենց գործունեությամբ խոչընդոտում են մեկը մյուսին:

.Ներխմբային կոնֆլիկտներ Կոնֆլիկտի ավանդական դասակարգման մեջ ոչ միշտ են ներգրավում ներխմբային կոնֆլիկտները: Դա կապված է նրա հետ, որ կոնֆլիկտի տեսակների սահմանների որոշման համար սովորական հիմք է համարվում նրա կողմերը, իսկ ներխմբային կոնֆլիկտների առանձնացման համար այդ հիմքերը բացահայտ ձևով խախտվում են: Եվ իրոք հարց է առաջանում, որն է համարվում ներխմբային կոնֆլիկտի կողմերը: Դրանք կարող են լինել կամ խմբի առանձին անդամներ, կամ նրա ներսում առանձին խմբակներ, կամ խմբի որևէ անդամը մյուս անդամների հետ: Սրա հիման վրա էլ ձևավորվեց այն կարծիքը, որ ներխմբային կոնֆլիկտները չունեն ինքնուրույն ֆենոմենոլոգիա և ընդունում են միջանձնային կամ միջխմբային կոնֆլիկտների ձև: Լ. Կոզեր՝ ներխմբային կոնֆլիկտների դրական ֆունկցիաները- Նրա հիմնական գաղափարները բերում են հետևյալին: Կոնֆլիկտի

շնորհիվ հնարավոր է դառնում համախմբվածության, միասնականության ստեղծումը կամ վերականգնումը, եթե այն անցյալում խախտվել էր: Սակայն կոնֆլիկտի ոչ բոլոր տեսակներն են նպաստում խմբի ամրապնդմանը, դա կախված է խմբի տեսակից և առանձնահատկություններից: Յուրաքանչյուր խումբ ունի կոնֆլիկտի պոտենցիալ հնարավորություն, որն առաջանում է անհատների պահաջումների միջև եղած հակասությամբ: Խմբի բնույթը էականորեն ազդում է այդ կոնֆլիկտների առանձնահատկությունների վրա և մասնավորապես նրանց ֆունկցիաների վրա: Այսպես, Կոզերը ենթադրում է, որ որքան խումբը նեղ է, այնքան կոնֆլիկտը ինտենսիվ է: Հեղինակը դա բացատրում է նրանով, որ փոխհարաբերությունների խորությունը նպաստում է անհատների էմոցիոնալ դրսևորումների ինտենսիֆիկացմանը, այդ թվում նաև թշնամական, որի առաջացումը նույնպես նեղ փոխհարաբերության արդյունք է, որը կարող է ընդունվել որպես վտանգավոր, ճնշվում է և հետևաբար՝ կուտակվում: Այս տիպի խմբերում կոնֆլիկտները սպառնում են նրանց հիմքերին և հետևաբար ունեն քայքայող բնույթ: Այնպիսի խմբերում, որտեղ մասնակիցները այդքան ամուր կապված չեն իրար հետ, կոնֆլիկտները ամենայն հավանականությամբ ավելի քիչ քայքայող կլինի: Դա պայմանավորված է հաճախակի առաջացող կոնֆլիկտներով, ինչը բերում է էներգիայի ծախսմանը և թույլ չի տալիս դրանց կուտակմանը: Ներխմբային կոնֆլիկտների վրա էական նշանակություն կարող է ունենալ նաև արտաքին միջավայրի հետ խմբի ունեցած հարաբերությունների բնույթը: Այսպես՝ խմբերում, որոնք ուրիշ խմբերի հետ անընդհատ գտնվել են քիչ թե շատ հակասության մեջ, մեծանում է անդամների շահագրգռվածությունը ընդհանուր գործունեության հանդեպ և ճնշվում է խմբային միասնությունից և տարաձայնությունից հեռանալու միտքը: Ներխմբային կոնֆլիկտների նկատմամբ մեծ համբերատարությունը ավելի բնորոշ է այն խմբերին, որոնց հարաբերությունները արտաքին աշխարհի հետ ավելի հավասարակշռված են: Այն սեցիալական կոնֆլիկտները, որոնք առաջանում են խմբում, ինչ-որ կոնկրետ խնդրի պատճառով, կապված է նրա գործունեության և նպատակների հետ և ուղղված են այդ խնդրի լուծմանը, Կոզերը անվանել է ռեալիստական: Դրանք համարվում են կոնկրետ արդյունքների հասնելու համր միջոցներ և կարող են խառնվել փոխհարաբերությունների այլընտրանքային հասնելու համար: Ներքին

կոնֆլիկտները ծառայում են նաև խմբի անդամների հակասական հետաքրքրությունների դրսևորմանը և դրանով իսկ նպաստում նոր տարաձայնությունների հնարավորությանը, ապահովելով անհրաժեշտ հավասարակշռության վերականգնումը: Կոնֆլիկտները հաճախ պայմանավորում են խմբի ներսում միասնության և կոլեռացիայի ստեղծումը, որի շնորհիվ ապահովվում է հնարավորություններին, որը ավելի համապատասխան է տվյալ արդյունքին բոլոր անդամների միջև փոխհարաբերությունները, փոքրացնում է մեկուսացումը, դաշտ է ստեղծում խմբի անդամների անհատական ակտիվության իրականացման համար:

1. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում:

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է 228 երեխայի պահանջումների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը

պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում Տհայրեր և որդիներ՝ խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել Տիդեալական ծնողի՝ իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իդեալական և իրական ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդությամբ լարված: 229 Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուներին և շներին: Գերադասում է խաղալ Տագրեսիվ՝ խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք

ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

2. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում:

Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ասելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում ջնորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

3. Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ:

Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազ- 230 մանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային

պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ազրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Քր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: 2010, 456 էջ:
2. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003. - 544с.
3. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.